ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2026թ. թիվ 646-Ա

Լ.ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2021 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 662-Ա որոշման 1-ին կետը, ինչպես նաև Լոռու մարզպետի և Լուսիկ Սարգսյանի միջև 2021 թվականի նոյեմբերի 4-ին կնքված աշխատանքային պայմանագրի 7.1 կետը, հաշվի առնելով ծանուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լուսիկ Անուշավանի Սարգսյանին 2026 թվականի օգոստոսի 28-ից ազատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2021 թվականի նոյեմբերի 4-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ա.Բակունցի անվան թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Լուսիկ Սարգսյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4.3-րդ մասով սահմանված կարգով սույն որոշումը ստորագրվելուց հետո երեք օրվա ընթացքում ծանուցել հասցեատիրոջը պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, էլեկտրոնային փոստի կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ
2414880046

X

2026-08-26 16:48:59 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Signed by: GHARIBYAN ARSEN 2414880046 Ա.ՂԱՐԻԲՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք.Վանաձոր